

«Հարթոք»-ը կարելի է կարդալ նաև համացանցի վրա հետևել հասցեով՝

www.zartonkdaily.com

հնչյուն նաև ձեր անհատական թղթակցություններն ու ծանուցումները կրկնապես փոխանցել խմբագրության հետևել հասցեներուն՝

e-mail: zartonkad@gmail.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

Ծանոթ՝ Խմբագրատան քարտուղարության ժամերն են. Երկուշաբթին - Ուրբաթ՝ կեսօրույ ժամը 12:00-էն երեկոյան ժամը 8:00

Էջ 02

Յօդուած  
Անձնական Մտորումներ

Էջ 03

Լիբանանահայ Կեանք  
Զմամաու վանքին մէջ Երանելի Իգլատիոս Մալոյեանին Նուիրուած Ամփիթատրոնի բացում

Էջ 04

Մարզական  
Այսօրուան Մրցումներու Յայտագիր

## Լիբանանեան Լուրեր

# «Լիբանանեան Ամբողջական Համաձայնութիւն Կայ՝ Փախստականներու Բնակեցումը Մերժելու»։ Մաշնուք

Տեսակին

Փողոց Իջնելը Կրկայ Դիրին Ըլլալ Սակայն Հետեանքները Ծա՛տ Ծանր...



Բաւական գարմանցով լսեցի սփիւռքահայ արուեստագիտուհիի մը հարցազրոյցը, որ կատարեց իր Լիբանան կեցութեան օրերուն:

Նշեալ արուեստագիտուհին կոչ կ'ուղղէր սփիւռքահայութեան՝ այսուհետեւ չօժանդակել Հայաստանին (Երեւի ըսել կ'ուզէր պետութեան), փոխարէնը նիւթապէս զօրակցիլ ժողովրդային շարժումներուն...:

Կը յարգեմ խօսքի ազատութիւնը եւ զգայուն արուեստագիտուհիի հոգեբանութիւնը, սակայն ըստ ինծի բաւական վտանգաւոր յայտարարութիւն է եղածը՝ եթէ անշուշտ լսող ունենայ...:

Օրինակ մը տալու համար ըսեմ, թէ անձնապէս կը հաւատամ, որ եթէ կրկնելի մէջ գտնուիլն, հոն եղող արուեստագետին կամ մտադրականին պարտականութիւնը զգաւնազուստ ըլլալն է եւ ո՛չ թէ զգաւններն մին...: Այս օրինակը անշուշտ բառացի նկատի չունիմ, ոչ ալ ռեւէ կողմ զգաւնի կը փորձեմ նմանեցնել, սակայն միտքս աւելի հասկնալի ու պատկերաւոր ներկայացնելու համար է, որ կ'օգտագործեմ զայն:

Արտասանած խօսքի պատասխանատուութեան գիտակցութիւն է, որ կ'անկկայեմ վերոյիշեալ արուեստագիտուհիին՝ հաւատալով, որ իր արտայայտութիւնը վայրկեանի մը զգացական անցողակի պոռթկում մըն էր ու պիտի մնայ սահմաններուն մէջ:

Մենք բազմիցս Հայրենիք եւ պետականութիւն կորսնցուցած ժողովուրդ ենք: Կարելի չէ նման զգացական պոռթկումներու վրայ համազգային քաղաքականութիւն հիմնել, որուն հետեանքը կրկնապէս ըլլալ՝ ափ մը մնացած մեր ժողովուրդին համար:

Սիրելի արուեստագիտուհի, եթէ կը կարդաս գրածս, հիմա խօսքս կ'ուղղեմ ուղղակի քեզի. Որպէս մտաւորական անձնաւորութիւն՝ կ'ենթադրեմ, որ պէտք է մարդկութեան պատմութեան ծանօթ ըլլալ: Հիմնուելով ասոր վրայ դուն լաւ պէտք է գիտնաս, որ թագաւորութիւններ, իշխանութիւններ կամ վարչակարգեր ժամանակակից են, մինչ ինձ՝ յաւերժական: Իսկ այդ իողին տեր կանգնելու համար մենք ուրիշ ճամբայ չունինք՝ բացի ամեն գնով թիկունք կանգնիլ Հայրենի ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ եւ ո՛չ անպայման փողոցին, ուր անկազմակերպ եւ անօրագիր իջնելը կրկնապէս համեմատաբար դիրին ըլլալ, սակայն անոր հետեանքները չա՛տ ծանր...:

Մեր սպարած աշխարհագրական շրջակայքը վկայ...:

ՍԵՒԿ ՅՎԿԻՐԵԱՆ



Ներքին գործոց նախարար Նուհատ Մաշնուք կեդրոնական Պեյրուքի Մոնթօ պանդոկին մէջ մասնակցեցաւ արտասահման բնակող լիբանանցի գործարարներու խորհուրդի համագումարին: Ան յայտարարեց, որ Լիբանանի ապագան սեւ չէ եւ քաղաքացիութեան վերատիրացումի օրէնքները դրուած են գործարարութեան ճիշդ հունին վրայ: Մաշնուք յայտարարեց, որ լիբանանեան ամբողջական համաձայնութիւն կայ՝ փախստականներու բնակեցումը մերժելու, հակառակ միջազգային բոլոր ճնշումներուն: Իր կարգին արտաքին գործոց նախարար Շըպարան Պասիլ յայտարարեց, որ քաղաքացիութեան վերատիրացումի օրինագիծը տակաւին կը մնայ տեսական քայլ մը, որովհետեւ կարիք ունի պետութեան կողմէ հետապնդուիլ: Պասիլ վերստին կոչ ուղղեց արտասահմանի լիբանանցիներուն շահերը եւ կարծիքները երեսփոխաններու միջոցով ներկայացնելու:

## Սալամէ Վարչապետին Երկրի Նիւթական Վիճակը Ներկայացուց



Վարչապետ Թամմամ Սալամ վարչապետարանին մէջ ընդունեց Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէն, որուն հետ քննարկեց լիբանանեան դրամատանային եւ նիւթական կացութիւնը, Սալամէ երկրի նիւթական վիճակը ներկայացուց վարչապետին, որ այս պայմաններուն մէջ զայն գոհացուցիչ գտաւ: Սալամ նաեւ տեսակցեցաւ Պեյրուքի մօտ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ տեղակալին հետ, քննարկելով Լիբանանի մէջ այդ կազմակերպութեան գործադրած ծրագիրներուն մանրամասնութիւնները:

## Շրջանային Լուրեր

### Միջազգային Ներման Կազմակերպութիւնը Մեծ Աղմուկ Կը Բարձրացնէ Թուրքիոյ Մէջ

Միջազգային Ներման կազմակերպութիւնը (Amnesty International) նշած է, թէ Թուրքիոյ իշխանութիւնները մեծ թիւով մարդիկ կալանքի տակ կը պահեն անյայտ վայրերու մէջ՝ յեղաշրջման փորձէն երկու շաբաթ անց: Կազմակերպութեան թուրքիոյ հարցերու մասնագետ Էստրու Կարտնըրը ըսած է, որ բանտարկեալները սովորական բանտերու մէջ պահելու անկարողութեան հետեանքով, կասկածեալները կալանքի կը դրուին երկրի տարբեր շրջանները գտնուող մարզական հաստատութիւններու եւ կենդանաբուժական կեդրոններու մէջ՝ անմարդկային պայ-

## Հայրենի Լուրեր

### Ոստիկանութեան Երկու Սպաներու Դեմ Մեղադրանք Առաջադրուած Է

Հայաստանի Յատուկ քննչական ծառայութիւնը հաղորդեց, որ մեղադրանք առաջադրուած է ոստիկանութեան երկու սպաներու նկատմամբ՝ լրագրողներու մասնագիտական օրինական գործունեութիւնը խոչընդոտելու եւ խոչըր չափերու գոյքային վնաս պատճառելու համար: Այդ սպաները վերջին շրջանին կայացած ժողովրդային ցոյցերու ընթացքին, լրագրողներուն դէմ բիրտ ուժ օգտագործած էին ու անոնցմէ քանի մը հոգիին մարմնական վնաս հասցուցած:

### «Սասնայ Ծռեր»-ու Անդամ Աշոտ Պետրոսեան Հացադուլը Դադրեցուց

Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ կրկին տեղի ունեցաւ ամենօրեայ հաւաք՝ ի պաշտպանութիւն «Սասնայ ծռեր» խումբին: Նախորդ օրերուն նման հաւաքներու ընթացքին խօսքեր արտասանեցին քաղաքացիներ, որոնք իրենց մտահոգութիւնը յայտնեցին երկրին մէջ առկա խնդիրներու մասին: Ազատութեան հրապարակին վրայ հաւաքուած ցուցարարներուն թիւը մեծ չէր: «Ազատութեան քաղաքական բանտարկեալներուն» եւ «Սասնայ ծռեր»-ու անդամներուն նկարներով պաստառներ պարզած, անոնք բացազանչեցին «Սասնայ ծռեր»: Մինչ այդ «Ղատապարտեալներու հիւանդանոց»-ը գտնուող «Սաս-

նայ ծռեր»-ու անդամ Աշոտ Պետրոսեան, հանդիպում ունեցաւ յորինող Տիգրան Մանսուրեանի հետ, որմէ ետք դադրեցուց 4 օրեայ առաջ սկսած հացադուլը: Պետրոսեանի փաստաբան Արա Պասիկեան նշեց, որ ան արդէն բժշկական օգնութիւն կը ստանայ, որ կը մերժէր հացադուլի օրերուն: Փաստաբանը նաեւ յայտնեց, որ թեւ Պետրոսեան դադրեցուցած է հացադուլը, բայց պիտի փորձէն հանդիպում կազմակերպել նաեւ անոր ու յորինող Ռոպերթ Ամիրխանեանին միջեւ: Նախապէս հաղորդուած էր, թէ Պետրոսեան, որ հրազենային վնասուածք ունի, կ'ուզէ հանդիպում ունենալ յորինողներ Մանսուրեանի եւ Ամիրխանեանի հետ:

### Ղարաբաղ-Ազրայեանական Սահմանին Վրայ Հակառակորդը Խախտած Է Չինադադարի Դրութիւնը

Ղարաբաղ-ազրայեանական հակամարտ գործերու շիման գիծին վրայ, հակառակորդը նախորդ գիշեր զինադադարի պահպանման դրութիւնը խախտած է 16 անգամներ, որու ընթացքին տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներէ, հայ դիրքապահներու ուղղութեամբ արձակած է աւելի քան

120 կրակոցներ: Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան նախարարութեան մամուլ ծառայութիւնը յայտնեց, թէ պաշտպանութեան բանակի յառաջապահ զօրամասերը ձեռնպահ մնացած են պատասխան գործողութիւններէ եւ շարունակած վստահօրէն իրականացնել մարտական ծառայութիւն:

### Փութինի Համաձայն Հայաստանը Եւ Ազրայեանը Փոխզիջումային Ու Երկուստեք Ընդունելի Լուծում Պէտք Է Գտնեն

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Պաշտպանութեան նախագահ Իլիամ Ալիեւի մէջ Ազրայեանի նախագահ Իլիամ Ալիեւի հետ հանդիպման ընթացքին յայտարարեց, թէ իր երկիրը պիտի ձգտի, որ Ազրայեանի ու Հայաստանը Լեռնային Ղարաբաղի տագնապին համար գտնեն փոխզիջումային եւ երկուստեք ընդունելի լուծում մը: «Ղարաբաղը իրապէս խնդիր մըն է, որ մեզի բաժին հասած է մեր խորհրդային անցեալէն: Գիտեմ՝ որքան սուր է այս հարցը թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Ազրայեանի համար: Մենք պիտի ձգտինք հասնելու անոր, որ Հայաստանն ու Ազրայեանը գտնեն այնպիսի լուծում մը, որ պիտի ըլլայ փոխզիջումային, սակայն երկուստեք ընդունելի», - ըսաւ Փութին անցնելով «որպէսզի այստեղ չըլլան յաղթողներ, այլ յաղթեն երկու երկիրներու ժողովուրդները, եւ երկու պետութիւններն ալ զգան, որ իրենց այդ բարդ խնդիրը լուծեցին ի շահ այսօրուան եւ ապագայի սերունդներուն»: Խօսելով երկկողմանի շարքերու լուծման մասին Փութին ըսաւ, որ Ռուսիան եւ Ազրայեանը կրկին գտնել այն խնդիրներուն լուծման ուղիները, որոնք կապուած են առեւտրական համագործակցութեան ծաւալի նուազման հետ, որուն վրայ ազդած են համաշխարհային տնտեսութեան ճգնա-

ծամային երեւոյթները եւ քարիւղի գիներու անկումը: Անոր խօսքով ռուսական շուրջ 600 ընկերութիւններ կ'աշխատին Ազրայեանի մէջ, իսկ ուղղակի ներդրումները կը կազմեն մօտաւորապէս 1,5 միլիարդ տոկոս: «Մեր համագործակցութիւնը կը շարունակուի Կասպից ծովուն մէջ, ներառեալ զինուորական համագործակցութիւնը», - նշեց Ռուսիոյ նախագահը:

Ռուսիոյ Ազրայեանի եւ Իրանի նախագահները՝ Վլատիմիր Փութինի, Իլիամ Ալիեւի եւ Հասան Ռուհանիի միջեւ Պաշտպանութեան ունեցած եռակողմանի հանդիպումին իբրեւ արդիւնք որդեգրուած հռչակագրին մէջ նշուեցաւ, որ երեք երկիրները մտադիր են հակազդել ահաբեկչութեան: Կողմերը նաեւ ընդունեցին, որ շրջանին մէջ գոյութիւն ունեցող տագնապները եակա խոչընդոտ են շրջանային համագործակցութեան համար եւ ընդգծեցին անոնց շուտափոյթ լուծման կարեւորութիւնը՝ բանակցութիւններու ճանապարհով միջազգային իրաւունքներու սկզբունքներուն եւ անոնց կապակցութեամբ ընդունուած որոշումներու եւ փաստաթուղթերու հիման վրայ :

էջ 02



ԳԱՅԱԿԱԼՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿ  
ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ  
ՀՈՎԻՏԱԿԱՆ ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՎԱՐՄԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ  
20-27 ՆՈՅՏԵՄԵՐ 2016





## Քրոնիկ

(Որպես Բաց Նամակ Արք. Աթեշեանին)

## Պատրիարքական Տեղապահին Դասալքումն ու Շփոթանքը

<b>Մեթր ԳԱՄՊԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆ</b>
------------------------------

***Ազգային արձանապատուօթիւնն է ազգի մը ազատութեան ու գոյատեւումին գրականկանը: Եթէ ծառը չհաւատայ, որ ինքը ծառ է, տերեւաթափ կ'ըլլայ: Եթէ հայը չհաւատայ, որ ինք հայ է՝ կ'օտարանայ:***

#### Նորայր Ադալեան

2016 թուի Փետր. 15-ին եւ Յունիսի սկիզբը, Պոլսոյ Դայոց Պատրիարքարանի ընդի. Տեղապահ Արք. Արամ Աթեշեան արձանագրեց երկու խիստ ծանրակշիռ սայթաքումներ, Նախ՝ ազգութեան հասկացութիւնը շփոթելով կրօնի հասկացութեան հետ, եւ ապա դասալիք ըլլալով Դայոց Արժանապատուօթիւնը պաշտպանելու իր Առաջնորդի պարտաւորութենէն...: Ծանրակշիռ այս ստրկամիտ ու պարտուողական սայթաքումները Առաջնորդ Տեղապահը գործեց՝ Դրանդ Տիկքի Նահատակութեան յաջորդող Պոլսոյ մէջ, որ հինը չէր այլեւս, եւ համայն թուրքիոյ հետ կ'ապրեր տեղաշարժային օրեր, ֆաշական իշխանութեանց դէմ բողոքի եւ իրապարակային ծառացումներու օրեր, եւ այս յեղաշրջական ընդհանուր պատահռիկ վրայ՝ իրենց նորահաստատ դիրքերը կը գրաւէին՝ «Լոր Չարթօնք»ի երիտասարդներն ու իրենց հայկական արմատներուն վերադառնալու վճռակամութիւնը յայտնող իսլամացուած եւ իսլամացած արեւմտահայերու,յանդուզն յառաջապահները, եւ մասնաւորաբար ՝ թուրքիացի (թիւրքիի) խիզախ քիւրտերն ու թուրքերը, որոնք իրապարակա կը ճանչնային Դայոց Տեղասպանութիւնը, հարիրը հազարներով մասնակցելով՝ Դրանդ Տիկքի թափօրին եւ միւս ցոյցերուն...:

**Պունտեպակի ճանաչումը**

2016 թ. Յունիսի 2-ին, Գերմանիոյ Պունտեպակը գրեթէ միաձայնութեամբ (միայն 1 դէմ եւ մէկ ձեռակահ), կը ճանչնայ ոչ միայն Դայոց, այլեւ ուրիշ քրիստոնեայ փոքրամասնութեանց Տեղասպանութեան փաստը, միաժամանակ ընդունելով Գերմանիոյ ձեռնպահութեան պատասխանատուութիւնը: Միաձայնութիւնը՝ երկու իշխանամետ կուսակցութիւններու՝ Բրիստոնեայ դեմոկրատական (CDU) եւ Սոցիալ դեմոկրատներ (PSD) եւ մէկ ընդդիմադիր՝ Կանաչներու կուսակցութեան միջեւ, այս վերջինին ընդի. Քարտուդարը ըլլալով թուրք մը՝ ճեմ Էօզտեմիր (Cem Ozdemir), համայն Գերմանիոյ ժողովուրդին անունով:

Թուրքիոյ ատենի դաշնակից Գերմանիոյ ճանաչումը, իր ալ պատասխանատուութեան հետ միասին, համազօր է իրեն դաշնակից՝ Նաեւ Թուրքիոյ ճանաչումին...: Որուն միւս դաշնակիցը՝ Ալքստրիան ալ արդէն ճանչցած էր Դայոց Տեղասպանութիւնը Երիտթուրքերու ձեռամբ... անցելով տարի:

Գերմանիոյ այս ճանաչումը ինքնաբուլս է եւ ազատ, քանի որ մենք չունէինք այն հօգօր միջազգային լրատուական ցանցը, որ ճնշած ըլլալով Գերմանիոյ վրայ...: Ընդիակառակը՝ Գերմանիա ականջ տուաւ իր երեկի դաշնակիցին ճնշումներուն, այլ ականջ տուաւ իր խղճմտանքի ձայնին, եւ առիթ մը նկատեց՝ իր եւս պատասխանատուութեան համար անուղղակի ներողութիւն խնդրելու հայ ժողովուրդէն: Այս խղճմտանքի ձայնը գոյութիւն ունէր արդէն առաջին օրէն՝ ոչ միայն իր շարք մը դէսպաններուն եւ պատմաբաններուն մօտ, այլեւ իր արդարադատութեան մարմիններուն մօտ՝

երբ 2 Յունիս 1921 թուականին, ճիշդ ու ճշդ 95 տարիներ առաջ Պունտեպակի որոշումէն (2/6/2016), գերմանական դատարանը ազատ արձակեց վրիժառու հերոս Սողոմոն Թեւիլիբեանը՝ երիտթուրք ու սիոնական ճիւղը Թալիաթը ահաբեկողը...:

Պատմական այս ճանաչումը յստակ եւ հսկայ տեղաշարժ մըն էր՝ Գերմանիոյ 100-ամեայ վարսնումին մէջ, որ կը նշանակէ, թէ այսօր ողջ երկրագունդը կ'արհի փոխանցումի շրջան մը՝ Արեւմուտքի պարտադրած միաբեւեռ աշխարհակարգէն դէպի բազմաբեւեռ աշխարհակարգ, ազդարարելով Արեւմուտքի մայրամուտը: Արեւմուտք, որուն նեցուկին շնորհիւ Թուրքիան կրցաւ գործել գոյգ ճիճրներ՝ զանգուածային տեղահանութիւն ու ցեղասպանութիւն:

Այս տեղաշարժին ու պատմական փոփոխութեան փաստերէն են՝ ռուս-գերմանական ուժանիւթի օգտագործումի առանցքը՝ «Դիւսիսային Դոսք»ի ծրագիրին, եւ միւս կողմէ՝ Բրիտանիոյ անջատումը Եւրոմիութենէն..., որ տարանջատումի դուռը լայն բացաւ Եւրոմիութեան անդամ շարք մը երկիրներուն առջեւ, մինչեւ անգամ՝ Սլովաքիոյ:

Եւ այս փոփոխութեան պատմական պահուն, պատրիարքական հայախուն Տեղապահը՝ ստրկամտօրէն կը ստորագրէ թշնամիին պատրաստած արուեսագիտական թրջաբարոյ նամակը՝ սուլթան Էրտողանին...:

Այս թրջատիպ նամակը՝ Սուլթան Էրտողան Ա.-ին ուղղուած, դատապարտում մըն էր Արք. Արամ Աթեշեանին դէմ, միաժամանակ դատապարտագիր մը՝ թուրք ֆաշական իշխանութեանց դէմ, անոր գործարդած բռնութեան պատճառով: Բռնատըր եւ ստրուկ՝ հաւասարապես մերկացուած են այս կեղծ նամակով, որուն հեղինակը Էրտողանն է եւ զայն միայն ստորագրողը՝ Տեղապահը, որ դասալիք եղած է իր Առաջնորդի դիրքէն, ոսնակոխելով հայ ժողովուրդի ազգային արձանապատուութիւնը, զլուխ ծռելով ջարդարար ու զաւթիչ թշնամիին առջեւ...: Ուղղքը՝ Սըրթթ ըլսած է. «Միայն չարը կը վախնայ միւս չարերէն»... բարին եւ առաքինին չի վախնար չար բռնատրերն, այլ կը դիմադրէ անոր: Առաջնորդի յաւակութիւն ունեցող անձին միտքը՝ սիրտին, եւ սիրտն ալ՝ միտքին մէջ պետք է ըլլայ, որպէսզի ընդդիմանայ իր հետեւորդներու կեանքին ու արժանապատուութեան սպառնացող բռնատրին: Վախկոտը չի կրնար Առաջնորդ մը ըլլալ...: Եւ եթէ այս ստրկական արարքը գործեց Տեղապահը, Պատրիարքի Աթոռի տիրանալու համար... բռնատիրոջ միջատուութեամբ, վերջին խօսքը կը պատկանի ժողովուրդին, որուն նեցուկը կորսնցուց Տեղապահը իր այս արարքով, որովհետեւ Պոլիսը եւ պոլսահայութիւնը ինքը չեն այլեւս: Փոխուած են Պոլիսն ու պոլսահայութիւնը: Փոխուած են Նաեւ ժամանակները: Տեղապահը իր ստորագրած նամակին մէջ կը խօսի «Ազգ»ին անունով, մինչդէռ ինք այլեւս չի ներկայացներ Արեւմտահայութիւնը Թուրքիոյ մէջ՝ իր այս եւ միւս երկրորդ սայթաքումով: Ան 18-րդ դարու եւ 19-րդ դարու առաջին կէսին պատրիարքներուն նման (որոնցմէ մին յորջորջուած էր Ճհեննեմ մերիվանը...), դարձած է Սուլթան Էրտողանի վեթիլը հայ ազգին (Միլլէթին) մօտ, փոխանակ ըլլալով հայ ազգին վեթեւը՝ Սուլթանի մօտ...: Եւ երբ ծանօթանաք ստրկական նամակի բովանդակութեան կը տեսնէք, որ Տեղապահը Գերմանիոյ հետ անգամ խօսած է սուլթան Էրտողանի բառերով եւ անոր փոխարէն...:

**Լոկ կրօնական պատկանելիութիւնը տակաւի ազգային պատկանելիութիւնն չէ**

2016 թ. Փետրուարի 15-ին, վարդանանց Տօկին առիթով՝ Պոլսոյ «Վարդանանց երգչախումբ»ի հիմնադրութեան 83-րդ տարեդարձի հանդիսութեան ընթացքին, Տեղապահը շօշափած է «հայկական ինքնութիւնը» թեման եւ խիստ բացասական կեցուածք արտայայտած իսլամացուած ու իսլամացած արեւմուտհայերու եւ մասնաւորաբար՝ համշէնահայերու նկատմամբ, կրօնը շփոթելով ազգութեան հետ՝ նոյնացնելով այս երկու իրարմէ հիմնովին տարբեր հանկացութիւնները, մերժելով ընդունիլ հայութեան պատկանելիութիւնը անոնց, որոնք կը խուսափին մկրտուելէ հայոց եկեղեցույ մէջ:

Այդ խուսափումը սակայն չունի մերժողական բնոյթ, այլ պարզապէս կանխազգուշական է՝ երկիրին իսլամական մղեռանդութեան տակաւ տարածման պայմաններուն մէջ, Սուլթան Էրտողան Ա.-ի բռնութեան ներքեւ: Եւ Դայոց եկեղեցույ մէջ չմկրտուած անձ մը, որ «Ես հայ եմ» կ'ընէ, կրնայ Դայութեան ծառայել շատ ատէլի մծօ զատկարութեամբ եւ հետեւողականութեամբ քան՝ մկրտուեալ հայերու մծօ բանակ մը:

Կրօնական ինքնութիւնը հիմնովին տարբեր է ազգային ինքնութենէն, եւ կրնան գոյութիւն ունենալ ոչ միայն հայ առաքելականներ, հայ կաթողիկէներ եւ հայ աւետարանականներ ու հայ հեթանոսներ, հայ պուտոտայականներ եւ հայաստանապաշտներ ու բազմազոյն հայ աղանդաւորականներ, որոնք հայ են ազգութեամբ եւ ոչ թէ կրօնական կամ դաւանական պատկանելիութեամբ:

Իսլամի կրօնը կը ճշդէ անոր կրօնական պատկանելիութիւնը եւ ոչ թէ ազգային պատկանելիութիւնը ու միայն փանթուրքիստներն են, որ իսլամական պատկանելիութիւնը նոյնացուցած են թուրք ազգային պատկանելիութեան հետ, թրջացնելու համար բոլոր ոչ-թուրք իսլամները: Իսլամի կրօնը՝ ինչպէս տիեզերական միւս բոլոր կրօններն ու զաղափարախօսութիւնները եւ փիլիսոփայական դպրոցները, չունին ազգութիւն, այլ համաշխարհային են ու համաարդկայնական: Տուեալ ժողովուրդի մը ազգային ինքնութիւնը չեն սահմանակապեր անոր դաւանած կրօնքով կամ զաղափարախօսութեամբ ու աշխարհայեացքով կամ փիլիսոփայական դպրոցով: Յուդայական կրօնին պատկանելիութիւնը բնաւ չի նշանակեր՝ «հրեայ ազգութեան» պատկանելիութիւն, որովհետեւ «հրեայ ազգութիւն» գոյութիւն չունի, իսլամ ազգութիւն գոյութիւն չունի, ջրոստոնեայ ազգութիւն գոյութիւն չունի, դրամատիրական, սոցիալիստական, կոմունիստական, ֆաշական, ցեղապաշտական, սատանայապաշտական, իդէապաշտական, մատերիապաշտական, ոչընչապաշտական, ակնոսապաշտական, պուտոտայական, աղնադաւորական, մասունկան, սիոնական, փանթուրքիստական ազգութիւններ գոյութիւն չունին, որովհետեւ գոյութիւն ունին ամենազգի սիոնիստներ եւ հակասիոնիստներ, փանթուրքիստներ եւ հակափանթուրքիստներ, կոմունիստներ եւ հակակոմունիստներ, ազատականներ եւ հակաազատականներ, մատնականներ եւ հակամատնականներ ու Թուրքիոյ բոլոր իսլամները՝ թուրք ազգայնականներ չեն, եւ Իսրայէլի բոլոր յուդայականները սիոնականներ կամ հրեայ ազգայնականներ չեն, որովհետեւ չկայ իսլամ

*Շար. 1*

## Անձնական Մտորումներ

<b>ԳԵՐՈՂ ԶԷՕՇՎԵՐԵԱՆ</b> <p><b>«Չարթօնք»ի աշխատակից</b></p>
--

Գիտենք, որ մարդիկ ընտանի կենդանիներ՝ յատկապես շուն եւ կատու կը սիրեն ու կը պահեն իրենց բնակարաններուն մէջ: Անոնք ընդհանրապէս շատ հոգատար են այդ կենդանիներու նկատմամբ եւ յաճախ կ'արտայայտուին անոնց մասին, որպէս իրենց ընտանիքի անդամը:

Ասկէ գատ նկատած եմ, որ մարդիկ արտակարգ թովջանք մը ունին կարգ մը կենդանիներու նկատմամբ, յատկապէս արջի ընտանիքին պատկանող շարք մը միաւորներու հանդէպ: Այս դասակարգին կը պատկանի առաջին առթիւ՝ չինական փանտա արքը (giant panda bear):

Փանտան բուսակեր է եւ կը սնանի հողկական եղէգով (bamboo): Ան աշխարհի բոլոր երկիրներու կենդանաբանական պարտէզներուն փնտռուած անասունն է: Այդ երկիրները Զինաստանէ փոխ կ'առնեն զայն, ցուցադրելու համար իրենց հանրութեան: Իսկ եթէ պատահի, որ փանտան ջրթօք մըն ալ ծնանի, հետաքրքրութիւնը կը բազմապատուի...:

Փանտային մասին խօսելով՝ հետաքըրքրական դէպք մը վերլիշէցի, զոր կ'ուզեմ բաժնել ընթերցողներուն հետ: 1972-ի ամրան կը գտնուէի Դիւսիսային Իրլանտայի Պէլիքեալը քաղաքը, առաջնորդի հանգամանքով, մասնակցելու ուսանողական միջազգային ճամբարի մը, որ կազմակերպուած էր Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին կողմէ (World Council of Churches):

Ուրբաթ օր մը, որ կոչուեցաւ Արիւնտու Ուրբաթ (Bloody Friday), ութը ռումբեր պայթեցան մայրաքաղաք Պէլֆասթի մէջ, տանեալ մը անմեղ զոհեր խլելով: Նոյն օրը Լոնտոնի կենդանաբանական պարտէզի փանտա առջը մահացաւ: Երեկոյեան Լոնտոնի «Պի Պի Սի» (BBC) ձայնասփիւռչ լուրերու բաժինէն հաղորդուեցաւ փանտան առջի մահուան լուրը եւ ոչ իսկ մէկ արտայայտութիւն՝ Պէլֆասթի պայթումներուն մասին:

Դիւսիսային Իրլանտայի բնակիչները աստիկ կատարած էին եւ զարցացած՝ պէտք է աւելցնել արդարօրէն, որ Լոնտոն դարձեալ անտեսած էր զիրենք: Գիտէք անշուշտ, որ հոն ապրող կաթողիկէ համայնքի զաւակները կ'ուզեն

### Հայրենի Լուրեր

*Էջ 01* ►►

## Փութինի Համաձայն Հայաստանը Եւ Ազրպէյճանը Փոխգիջումային Ու Երկուստեք Ընդունելի Լուծում Պէտք Է Գտնեն

Հռչակագիրին մէջ Նաեւ ընգծուեցաւ երկիրներուն առեւտրատնտեսական համագործակցութեան զարգացման եւ խթանման անհրաժէշտութիւնը:

Ղարաբաղի մասին խօսեցաւ Ազրպէյճանի Նախագահ Իլիամ Ալիեւը: Իր ելույթին մէջ Ալիեւ նշեց, թէ «Իրանն ու Ռուսիան յարգանքով կը վերաբերին Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան, անկախութեան եւ ինքնիշխանութեան, եւ թէ երկու կողմերն ալ բազմիցս յայտարարել էին, որ խնդիրը պէտք է կարգաւորել՝ հիմնուելով միջազգային իրաւունքի չափանիշներուն եւ Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան շըրջագիծն ենք»։ Ալիեւի խօսքով, «այսօրուայ սթաթիւս քոն ընդունելի չէ, եւ

միանալիլրանտայիիանրապետութեան, մինչ բողոքականները չեն ուզեր բաժնըւլիլ Մեծն Բրիտանիայէն: Այս էր պատճառը այդ ահաւոր պայթումներուն:

Վերադառնալով մեր նիւթին, արջերու ընտանիքին յաջորդ միաւորը, որ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ իր շուրջ՝ Աւստրալիոյ քուալա արջն է (koala bear): Ան ալ բուսակեր է եւ կը սնանի եւկալիպտոս (eucalyptus) ծառի տերեւներով:


Հոս հասարակաց սիւսլ ըմբռնում մը կայ անոր մասին՝ այն իմաստով, որ թէեւ koala bear կ'ընտն, սակայն աւ կը պատկանի ազելվազի (kangaroo) ընտանիքին եւ անոնց նման ունի պարկ մը (pouch), ուր կը պահէ իր ձագերը:

Հետաքրքրական է գիտնալ, որ քուալա արջը օրական 19 ժամ կը քնանայ եւ արթուն եղած ժամանակն ալ շատ շարժուն չէ: Ան իր ժամանակին մեծամասնութիւնը կ'անցնէ ծառի վրայ, տերեւներ ուտելով: Ըստ վիճակագրական տուեալներու, անոնց թիւը մեծապէս պակսած է՝ յատկապէս վերջին տասնամեակին, եւ 90 տոկոսով անկում կրած է:

Հիմա անցնինք արջի ընտանիքին պատկանող եւ արտակարգ հիացմուկ պատճարող բեւեռային արջին: Սպիտակ այս արջը ամենակեր է (omnivorous) եւ յատկապէս կը սիրէ ձուկը: Ան կը բնակի հիւսիսային բեւեռի շրջանը եւ զինք կարելի է գտնել Գանատայի եւ Ալաքսայի ձիւնապատ բարձունքներուն վրայ:

Ամառ մը ընտանիքով Նաւային շրջալըտոյտի մը կը մասնակցեիինք՝ Գանատայի Վէլքուվըր քաղաքէն մինչեւ Ալաքայի Էսըըրեճ քաղաքը: Նաւուն վրայ կային մարդիկ, որոնք Էսըըրեճէն անդին պիտի երթային՝ Ֆերպէլքս, ուրկէ շոգեկառքով պիտի բարձրանային Ալաքսայի ձիւնապատ անտառները՝ որպէսզի սպիտակ արջ տեսնէին: «Բազում աղմուկ, վաան դէինչի» պիտի որակէի այդ առաքելութիւնը:

Քարելկամ, եթէ կ'ուզես բեւեռային արջ տեսնել՝ զնա՝ որեւէ կենդանաբանական պարտէզ եւ դիտէ մինչեւ կշտանաւ: Պէ՛տք է անալոյման այդ արջը տեսնել իր բնական միջավայրին մէջ: Ըստ ինձի՝ ոչ, սակայն մարդիկ ազատ են, ինչպէս կ'ընէ ամերիկեան ասացուածքը՝ «Ամէն մէկուն իր անձնականը» (”To each, his own” ) եւ վերջ:



⤷ **Պատմութեան Մէջ Այսօր**

### Ռուբէն Նազեան

Մեր թուականէ 119 տարիներ առաջ՝ 10 Օգոստոս 1897-ին Նիւ Եորքի մէջ ծնած է քանդակագործ Ռուբէն Գերոգ Նազեան:

Ռուբէն Նազեան 1912-1915-ին ուսանած է Նիւ Եորքի Ազատ արուեստներու դպրոցը, ապա Գեղեցիկ արուեստներու ակադեմիան: Սկզբնական շրջանին ստեղծած է կենդանական գործեր՝ «Յուլը եւ կովը», «Հորթը», «Փուկը» եւայլն:

Ռուբէն Նազեան 1930-ին մասնակցած է «33Մոտերիստներ» (արդիապաշտներ) ցուցահանդէսին: Մէկ տարի ետք հանդի-

պած է գեղանկարիչ Արշիլ Կորքիին (Ռուսանիկ Ադոյեան), որ մեծ ազդեցութիւն ձգած է իր գեղագիտական սկզբունքներու կողմորոշման եւ հաստատման վրայ:

Ռուբէն Նազեան ստեղծած է անուանի արուեստագէտներու եւ քաղաքական գործիչներու դիմաքանդակներ, Աստուածաշունչի եւ դիցաբանական թեմաներով գործեր, ինչպէս «Վեներայի ծնունդը», «Լետան եւ կարապը», «Սալոմէի պարը», «Նիմփէն եւ տելֆինները», «Պարուիի», «Սաթիրիթոն» (քանդակաշար), «Աստուածներու պարտէզը» (քանդակաշար):

Ռուբէն Նազեանի «Խաչէն իջեցնելը» կորոզային քանդակը՝ Մեծ Եղեռնին նուիրուած յուշակոթողը (1972), դրուած է Նիւ Եորքի Սուրբ Վարդան եկեղեցույ մէջ: Անոր աշխատանքներուն (առաւելաբար

պրոնզափառ թրծակաւով), բնորոշ է դասական աւանդոյթներու, արտայայտչականութեան եւ գերիրապաշտութեան տարրերու ազատ համադրումը:

Ռուբէն Նազեանի ստեղծագործութիւնները 1920-ականներէն ներկայացուած են ցուցահանդէսներու մէջ, որոնցմէ առաջին անհատական ցուցահանդէլը տեղի ունեցած է 1926-ին, Նիւ Եորքի «Ուիթնի Սթիւտիօ-Էլապ»-ի մէջ, ապա «Տաունթաուն» եւ «Կրէտ Սենթըլը» պատկերասրահները: Յուցադրուած է Շիքակոյի «Արուեստի հիմնարկ»-ի, Նիւ Եորքի «Արդի արուեստի» եւ «Ուիթնի» թանգարաններու մէջ: Զանդակագործութեան ասպարէզի մէջ Միացեալ Նահանգները ներկայացուցած է 1961-ին Սան Փաուլոյի (Պրագիլ) 6-րդ, իսկ 1968-ին

Վենետիկի 34-րդ պիեսալէներուն:

Ռուբէն Նազեան ցուցահանդէսներ ունեցած է Լոս Անճելըս (Քալիֆորնիա), Ուաշինկթըն (Վիրճինիա), Սթամֆորտ եւ Կրիկիչ (Զենեթիքըթ), Ֆիլատելֆիա (Փենսիլվանիա), Շիքակօ (Իլլինոյ), Դիւսթըն (Թէքսաս), Միլուոքի (Ուիսկոնսին), Փարիզ, Լիզպոն, Տրեստըն եւ Շաւումպըրկ քաղաքները: Իր գործերէն կը պահուին ԱՄՆ-ի թանգարաններուն մէջ:

Ռ



## Լիբանանահայ Կեսեր

# Չմամռու վանքին մէջ Երանելի Իգևատիոս Մալոյեանին Նուիրում Ամփիթատրոնի բացում

Կիրակի, 7 օգոստոս 2016-ին, Չմամռու մէջ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առիթով տեղի ունեցաւ Չմամռու պատրիարքական կղերի միաբանութեան նահատակ երանելի Իգևատիոս արք. Մալոյեանի նուիրում ամփիթատրոնի բացման պաշտօնական հանդիսութիւնը:



Նախագահութեամբ եւ հովանաւորութեամբ Տան Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Գրիգոր Պետրոս Ի. կաթողիկոս պատրիարքին եւ մասնակցութեամբ հոգեւոր հայրերու ջոզագերծուեցաւ երանելի Իգևատիոս արք. Մալոյեանի արձանը եւ ապա կատարուեցաւ անոր օծումն ու օրհնութիւնը:

Հանդիսութեան ներկայ եղան մարտիկ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը,



Լիբանանի մէջ պապական նուիրակ՝ Կապրիէլ Զաչիա Եպիսկոպոսը, Անտիոքի եւ համայն արեւելքի յոյն կաթողիկէ համայնքի Կրեկորիոս Գ. Լահիամ պատրիարքը, Մեծի Տան Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան, վեր. Բաֆֆի Մսըղեան,

Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Սամուէլ Մկրտչեան, ինչպէս նաեւ զինուորական պատասխանատուներ, պետական երեսփոխաններ, նախարարներ, հոգեւորականներ, միութիւններու, կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ հիւրեր:

## Թրքական Բարքեր

# Հայկական Մշակութային Ժառանգութեան «Սպանդ»-ը Կը Շարունակուի Արեւմտահայաստանի Մէջ

**Կեանք Թաղին Մէջ Կեանք Զեր Մնացած Հիմա Թաղամասն Այլ ՉՄնաց**  
«Ակունք» կը հաղորդէ, որ երբ 2 Դեկտեմբեր 2015-ին Տիգրանակերտի Սուր թաղամասին մէջ յայտարարուած զինադուլի դրոյթիւնը վերջերս որոշ չափով վերջ գտաւ, սկսաւ ի յայտ գալ Սուրի կրած վնասներուն տարրողութիւնը:



Սուր թաղամասին մէջ գտնուող Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ մէջ կատարուած ուսումնասիրութիւնները բացայայտեցին, որ վնասուած է հիմնականօրէն ներսի կողմը, եւ ոչ թէ դուրսի: 6 ամիս ոչ ոք կրնար տեսնել եկեղեցին՝ բախումներու տարածքին մէջ գտնուելուն պատճառով:

Տիգրանակերտի մէջ մարդու իրաւունքներու պաշտպանները եկեղեցին այցելելէ ետք յայտնած են, որ եկեղեցւոյ պատերը, տանիքն ու զանգակատունը լուրջ վնասներ չեն կրած:

Սակայն միւս կողմէ անոնք արձանագրած են, որ եկեղեցւոյ բոլոր ապակիները կտրուած են, անկապ օգտագործուած է որպէս ռազմակայան, նստարանները պատուհաններուն յենելով պատնէշներ ստեղծած են, ներսը վառարան շինած են, որուն մէջ այրած են կարգ մը նստարաններ, իսկ եկեղեցւոյ ներսը աղբանոցի վերածած են:

Նշելով, որ յատկապէս մեծ աւերի ենթարկուած է Սուրբ Կիրակոսի այգիին մէջ գտնուող փոքր եկեղեցին, մարդու իրաւունքներու պաշտպանները նաեւ յայտնած են. «Գողցուած է եկեղեցւոյ գրասենեակը, կողոպտուած են վաճառուելու նպատակով այստեղ գտնուող գիրքերը, ինչպէս նաեւ նուրբերը: «Զահանայատուն» կոչուող ներքեւի յարկին վրայ մեծ անջ մը բացուած է, որուն միջոցով կապ հաստատուած է Սուրբ Կիրակոսի կողմը գտնուող քաղաքական եկեղեցւոյ հետ»:

Մարդու իրաւունքներու պաշտպանները նաեւ ընդգծած են, որ մեծ աւերի ենթարկուած է նաեւ փողոցը, ուր կը գտնուի Սուրբ Կիրակոս եկեղեցին:

Յայտնելով, որ այստեղի բոլոր խաւութիւններն ու տուները քանդուած են, անոնք դիտել տուած են, որ նախապէս ներկի այդ փողոցը այժմ ամբողջովն դատարկ է եւ վերածուած է բաց տարածքի մը, նաեւ շէտած են, թէ Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ պատկանած շուրջ 25 խանութներ եւ գետնին հաւասարած են:

Մարդու իրաւունքներու պաշտպանները յայտարարած են. «Յատկապէս

Սկրտիչ Մարկոսեանի փողոցը այլեւս հարթ տարածք է. հոնկէ Նոյնիակ Մարդիկնեպիւն կ'երեւի: Կեանքը թողը այլեւս ամբողջովն դատարկ եւ ընդարձակ տարածք մըն է: Խճաքարերը հաւաքուած են, բայց եողորթափազար փողոցի տունները տակաւին կանգուն են: Կեանքը թաղին մէջ կեանքը չէր մնացած, հիմա թաղամասն ալ չմնաց»:

### Սիվրիհիսարի Հայկական Եկեղեցւոյ Բակին Մէջ Հայատեաց Թուրք Զաղաքական Գործիչներու Արձաններ Տեղադրուած են



Թուրքիոյ Եսքիշեհիր նահանգի Սիվրիհիսար գաւառին մէջ գտնուող հին հայկական Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ բակին մէջ, թուրքերը հաստատած են յայտնի անձերու արձաններու թանգարան: «Ակունք»-ին համաձայն այդ մասին կը հաղորդեն թրքական լրատուամիջոցները:

Ըստ աղբիւրին հայկական եկեղեցւոյ բակին մէջ այսպիսի թանգարան ստեղծելու գաղափարը ներկայացուած է 2011-էն, երբ Թուրքիոյ մշակույթի օրուան նախարար Երթուղլու Կիւնալը յայտարարած է այդ նախագիծին մասին:

Աղբիւրը կը նշէ, թէ հայկական Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ բակին մէջ, որ կարմիր քարերէ կառուցուած ըլլալուն պատճառով յայտնի է նաեւ Քրզըլ Քիլիս (Կարմիր եկեղեցի) անունով, ներկայացուած են հայատեաց թուրք քաղաքական գործիչներ Աթաթուրքի եւ Զեաքիմ Զարապեհիի, ինչպէս նաեւ տարբեր ժամանակաշրջաններու ստեղծագործած գրողներ Եաշար Բեմալի, Եունուս Եմերի, Զարաօղլանի եւ այլոց արձանները, որոնց թիւը կը հասնի 100-ի

### Արշակունիի Հայկական Եկեղեցին Եւ Պատմական Բաղնիքը Աւերակ Կիճակի Մէջ են




Թուրքիոյ մէջ աւերուած վիճակի մէջ կը գտնուին Արշակունիի հայկական եկեղեցին եւ Կեանքը անունը կրող պատմական բաղնիքը: Այդ մասին ըստ «Ակունք»-ի կը հաղորդեն թրքական լրատուամիջոցները:

Ըստ աղբիւրին Կեանքը անունով բաղնիքը արդէն քանդուելու վտանգի տակ է, իսկ պատմական եկեղեցւոյ պատերուն վրայ մեծ ճեղքեր յառաջացած են: Այս եկեղեցւոյ վերականգման ուղղութեամբ տարիներ շարունակ ոչ մէկ քայլ առնուած է, անոր սեփականութեան կալուածագիրը կը պատկանի Արշակունիի քաղաքապետարանին:

19-րդ դարուն Արշակունիի մէջ տեղւոյն հայկական համայնքին կողմէ կառուցուած է հետագային ժամանակ առ ժամանակ մշակութային նախաձեռնութիւններու գործադրութեան նպատակով օգտագործուած այս եկեղեցին, այդպէս ալ չէ վերականգնուած թրքական իշխանութիւններուն կողմէ՝ հակառակ բազմիցս տրուած խոստումներուն:

Ինչպէս կ'ընդգծուի իրապարակման մէջ, պատմական եկեղեցին եւ Կեանքը կոչուող բաղնիքը անհետ կորսուելու եւ ոչնչանալու վտանգի տակ են:

### Թրքական Թերթը Հայկական Սոկոս Կը Յիշէ



Վան նահանգի «Մերքուր հապեր» շաբաթաթերթը իր 10 Յուլիսի թիւին մէջ յորդուած մը իրապարակած է՝ Վանի Սոկոս գաւառի հայերուն մասին: Հոն նշուած է, թէ հակառակ այն իրողութեան, որ Սոկոսի շրջանի բոլոր հայկական բնակավայրերը 1923-էն ետք թրքական անուններով մկրտուած են, բայց եւ այնպէս շրջանի բնիկները, յատկապէս քիւրդները, այդ գիւղերն ու ավանները կը յիշեն իրենց հայկական անուններով:

Արշակունիներու օրով Սոկոսի մէջ կը գործէր Սոկոս նախարարութիւնը: Սոկոսի իշխանը իր զօրագուններով մասնակցած է Աւարայրի ճակատամարտին:

16-րդ դարուն շրջանին կը տիրեն օսմանցի թուրքերը: Սոկոսի 49 հայկական բնակավայրերու հայ բնակչութիւնը՝ աւելի քան 900 ընտանիք, 1915-ին տեղահանուեցաւ եւ գոհ գնաց բնագաղթի ճամբուն վրայ: Փրկուածները անցան Արեւելեան Հայաստան եւ բնակութիւն հաստատեցին Թալիսի, Աշտարակի եւ Սեւանի շրջաններուն մէջ:

## Արցախի Զօրակցութեան Ալիք

# Սթրասպուրկի «Հայորդի» Երիտասարդաց Միութեան Աջակցութիւնը Հայաստանին Եւ Արցախին

Սթրասպուրկի մէջ գործող «Հայորդի» երիտասարդաց միութեան նախաձեռնութեամբ արդէն 2-րդ տարին է, որ կ'իրականացուի «Օգնել սահմանամերձ գիւղերուն» բարեգործական ծրագիրը: Նպատակը՝ սահմանամերձ գիւղերուն մէջ բնակող անապահով ընտանիքներու երեխաներուն հագուստով եւ գրեական պիտոյքներով ապահովելն է:



գիւղերու անապահով ընտանիքներուն: Ընդհանուր առմամբ՝ օգնութիւն ստացած է շուրջ 140 ընտանիք:

«Հայորդի» երիտասարդական միութեան անդամները Յուլիս 30-էն մինչ օգոստոս 3 այցելեցին Արցախ եւ ՀՀ Տաւուշի մարզ՝ միութեան օգնութիւնը հասցնելով անապահով ընտանիքներուն: Այս մասին «Հայերն այսօր»-ին կը յայտնեն նախաձեռնողները:

Արցախի մէջ երիտասարդները եղան Մարտակերտի շրջանի Նոր Մէյսուան եւ Նոր Հայկաջուր գիւղերուն մէջ, իսկ Տաւուշի մարզին մէջ օգնեցին Մովսէս, Ներքին Կարմիրաղբիւր եւ Այգեպար

Սօս օրերս միութիւնը ծրագրած է այցելել Հայաստանի սահմանամերձ գօտիի գօրամասեր եւ զինուորներուն տրամադրել առողջապահական եւ այլ անհրաժեշտութեան պարագաներ:

## Հայրենի Իրագործումներ

# Հայ Ուսանողները 7 Մետալ Շահած Եւ Մաթեմաթիկական Միջազգային Մրցոյթին



Պուլկարիոյ Պակոնեկրատ քաղաքին մէջ տեղի ունեցած է մաթեմաթիկական միջազգային ուսանողական հերթական մրցոյթը (IMC), որուն մասնակցած են աշխարհի 72 համալսարաններու խումբեր՝ աւելի քան 320 մասնակից, կը տեղեկացնէ ԿԿԸ մամուլի ծառայութիւնը:

ուարկներով: Երեւանի պետական համալսարանը ներկայացած է 4 մասնակիցներով, որոնցմէ երկուքը՝ Ալպեր Գերգեանը եւ Ալպեր Սահակեանը արժանացած են ոսկէ մետալներու, Վազգէն Միջայելեանը՝ արծաթ մետալի, իսկ Աւետիք Գարակուլեանը՝ պրոնզէ մետալի:

Հայաստանի Ամերիկեան համալսարանը ներկայացած է 2 մասնակիցներով, որոնցմէ Արտեմ Զոսեանը արժանացած է արծաթէ մետալի, իսկ Լեւոն Ստեփանեանը՝ պրոնզէ մետալի: Հայաստանի Սլաւոնական համալսարանը ներկայացած է մէկ մասնակիցով՝ Հրաչեայ Եղաբեկեանը, որ արժանացած է պրոնզէ մետալի:

Ընդհանուր առմամբ՝ հայաստանցի 7 մասնակիցները արժանացած են 2 ոսկէ, 2 արծաթէ եւ 3 պրոնզէ մետալներու:

Ուսանողական միջազգային մրցոյթին Հայաստանի խումբերը ղեկավարած է ԵՊՀ եւ ՀԱՀ դասախօս Կարեն Բեռեան:

## Սուրիահայ Օրագիր

# Ս. Աստուածածնայ Կերպիոյման Տօնին Առիթով Խաղողօրհնէք Հալէպի Մէջ



Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով, Հալէպի Ս. Աստուածածին եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներուն մէջ մատուցուեցաւ Ս. եւ Աւանի Պատարագ, որմէ ետք խաղողօրհնէք արարողութիւն տեղի ունեցաւ: Ապա ներկայ հաւատացեալները հաղորդութիւն ստացան եւ օրհնուած խաղողը տարին իրենց բնակարանները: Այս մասին կը յայտնէ Հալէպի «Գանձասար» շաբաթաթերթը:

Այցելեցէ՛ք  
Կարդացէ՛ք  
Տարածեցէ՛ք  
www.RagMamoul.net-ը



# Մարզական

## Այսօրուան Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել այսօրուան մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ խումբին դիրքը): Ողիմպիական խաղերու յայտագրին մէջ տեսնել Յայաստանի եւ Լիբանանի մարզիկներուն յայտագիրը.

### ԱՎՈՒՄԲԵՐՈՒ ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Ժամը 21:30 Ինթեր Միլան - Պորուսիա Տորթմունտ

### ԿԻՊՐՈՍԻ ՍԻՒՔԵՐ ԲԱԺԱԿ

Ժամը 20:00 ԱՓՕԷԼ Սիկոսիա - Ափոլլոն Լիմասոլ

### ՍԿՈՎՏԻՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄ

Ժամը 21:45 Սելթիք - Մատըրուել

### ԶՈՓԱ ՍՈՒՏԱՄԵՐԻԶԱՆԱՅԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏ. ԶԱՆԳՐՈՒՄ

Ժամը 01:00-Էն 07:00

### ԱՄՆ-Ի ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ ԶԱՆԳՐՈՒՄ

Ժամը 05:00 Լոս Անճելըս Կալաբրի - Տայաս

### ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՏՂՈՑ ԶՏՈՒՄԻ 3-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ

Ժամը 19:00 Ալճերիա (4) - Փորթուկալ (1)

Ժամը 19:00 Արժանթին (3) - Ղոնտուրաս (2)

Ժամը 22:00 Գերմանիա (3) - Ֆիճի (4)

Ժամը 22:00 Գար.Զորեա (1) - Սեքսիբա (2)

Ժամը 01:00 Ծաբոն (3) - Շուէտ (4)

Ժամը 01:00 Զոլդմայիա (2) - Նիկերիա (1)

Ժամը 04:00 Ղանիա (1) - Պրագիլ (2)

Ժամը 04:00 Գար.Ափրիկէ (4) - Իրաք (3)

### ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

-Ժամը 14:30 Դեմեթրիա Կիներու ժամանակի դէմ մրցում

-Ժամը 14:30-19:00 Թիակարութիւն Տղոց եւ կիներու գտումի

եւ ռեփէշաժի մրցումներ: Ժամը 16:20 տղոց 4 հոգիւնոց սքալզի

աւարտական: Ժամը 16:30 կիներու 4 հոգիւնոց սքալզի

աւարտական: Ժամը 16:30 կիներու 4 հոգիւնոց սքալզի

-Ժամը 14:30-00:00 Սոււերամարտ Կիներու ճկաստանի-foil

գտումի եւ աւարտական մրցումներ

Լիբանանէն Սոնա Շրիիթո կը մասնակցի այս մրցումին:

-Ժամը 15:00-04:00 Զրագնդակ Տղոց գտումի մրցումներ

-Ժամը 15:00 - 22:00 Նշանագութիւն Տղոց 50 մետր

ատրճանակ եւ տղոց զոյգ թրէյի գտում եւ աւարտական

-Ժամը 15:00-23:00 Նետածգութիւն Կիներու եւ տղոց

անհատ.գտում

-Ժամը 15:30-05:00 Վոլիպոլ Կիներու գտումի մրցումներ

-Ժամը 15:30-03:50 Զեռնակնդակ Տղոց գտումի մրցումներ

-Ժամը 16:00 Դեմեթրիա Կիներու ժամանակի դէմ մրցում

-Ժամը 21:30 Ծանրամարտ Կիներու 69 քկ. դասակարգի

աւարտական Ժամը 01:00 Տղոց 77 քկ. դասակարգի

աւարտական -Նազիկ Ավտայեան 69 քկ. Ժամը 21:30

-Անդրանիկ Կարապետեան 77 քկ. Ժամը 01:00

-Ժամը 16:00 Ժիւսո Տղոց 90 քկ. եւ Կիներու 70 քկ.

դասակարգի գտում -Ժամը 16:00-06:00 Ծովափի վոլիպոլ Տղոց

եւ կիներու գտումի մրցումներ -Ժամը 16:00 Զիպարժութիւն

Անհատական եւ խմբային տրեսաժի գտում

-Ժամը 16:00-20:30, 23:00-01:30 Մակնախաղ-hockey Տղոց

եւ կիներու գտումի մրցումներ

-Ժամը 16:45 Թենիս Տղոց եւ կիներու 3-րդ

հանգրուանի մրցումներ -Ժամը 17:00-02:00 Բոսնացի

Տղոց 49 քկ., 56 քկ., 64 քկ., դասակարգերու

գտում -Արամ Աւագեան 56 քկ. Ժամը 17:30

-Յովհաննէս Պաքըժ 64 քկ. Ժամը 18:30

-Ժամը 17:00-01:00 Ռակպի Տղոց գտումի մրցումներ

-Ժամը 18:15-05:30 Պասքեթպոլ Տղոց եւ կիներու

գտումի մրցումներ -Ժամը 19:00-01:30 Առագաստանա

Տղոց ֆին, լէյզըր, 470, նաքրա 17, կիներու

470, լէյզըր դասակարգերու գտումի մրցումներ

-Ժամը 19:00-21:00 Լողարշաւ Կիներու եւ տղոց

գտումի մրցումներ Ժամը 04:00 - 06:00 Տղոց 200 կուրծք

լող աւարտ., կիներու 200 մետր թիթենիկ

լող աւարտ., տղոց 100 մետր ազատ

լող աւարտ. -Ժամը 19:30-21:45 Զանայի Արգելարշաւ

Տղոց քայաքի անհատական

Ժամը 22:00 Մարմամարզութիւն Տղոց

անհատական ընդի.աւարտ. -Ժամը 22:00

Զրացատկ զոյգ տղոց 3 մետր ցատկահարթակի

աւարտ. -Ժամը 00:00-04:30 Սեղանի թենիս

Կիներու անհատական կիսաաւարտականի

մրցումներ Ժամը 02:30 կիներու 3-րդ

դիրքի մրցում, Ժամը 03:30 կիներու

աւարտ.

### Արդիւնքներ

ՄԱՐՄԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ- ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

- Տղոց խմբային աւարտական

1-Ծաբոն 274.094 կէտ, 2-Ռուսիա 271.453 կէտ,

3-Չինաստան 271.122 կէտ,

### ԲՈՒՆՔԱՄԱՐՏ- ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

- Տղոց 69 քկ. դասակարգի գտում

Արայիկ Մարութեան (Գերմանիա) - Կապրիէլ Մյետթե

(Վենեց.) 1-2

### ԶՐԱՑԱՏԿ-ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

- 2ոյգ տղոց 10 մետր աշտարակի

աւարտական 1-Չնէ եւ Լին Չինաստ. 496.98 կէտ,

2-Պուսիա եւ Ծոնսըն ԱՄՆ 457.11 կէտ

3-Տեյլի եւ Կուսթէյլո Բրիտանիա 444.45 կէտ

### ՍՈՒՄԵՐԱՄԱՐՏ- ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԵՎՈՐԵՄԸ ԱՆՈՅԵՄԸ

- Կիներու սուրի-sabre աւարտական մրցում.

Եւան Եկորեան Ռուսիա - Սոֆիա Վելիքայա Ռուսիա

15-14 Երրորդ դիրք. Օլկա Խարլան Ուլըր. - Մանոն

Պրիւնէ 15-10

### ՃԻՏՕ- ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

- Տղոց 73 քկ. դասակարգի աւարտական մրցում.

Շոհէյի Օսո Ճաբոն - Ռուստամ Օրուխով

Ատրպէյճան 110s1-0\*\*\* Երրորդ դիրք.

Տղոց Վան Թիխալը Պելճ. - Միքլոս Ունկլարի

Ռուս. 100-0 - Կիներու 57 քկ. դասակարգի

աւարտական մրցում. Ռաֆայելա Սիլվա

Պրագիլ - Սումիյա Տրոսուրէն Մոնկ. 10s2 -

0s1 \*\*\*Ժիւստոյի մէջ կան երեք կէտ

շահող շարժումներ՝ 1-Կիոն, որ նաք

առաջ է 100 կէտ է, 2-Ռագա արի որ 10 կէտ

կ'ապահովէ եւ 3-Շիսո որ 1 կէտ կ'ապահովէ:

Այսինքն ճաբոնցի Օսոն կատարած է մէկ

իփոն, 1 ուագա արի եւ 1 շիսո:

### ՈՎԿՊԻ-ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԱՄՏԱՐԱԼԻԱ ԸՄՅԵՑԱՒ ՏԻՏՐՈՒՄ

-Կիներու աւարտական մրցում.

Աստրալիա - Նոր Զելանտա 24-17

Երրորդ դիրք. Զանատա - Բրիտանիա

33-10

### ՆՇԱՆԱՃՁԳՈՒԹԻՒՆ- ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

- Տղոց 10 մետր հրացան աւարտական

1-Նիքըրո Ժամբիականի Իտալիա 206.1 կէտ,

2-Սերկէ Զուլի Ուլըր. 204.6 կէտ,

3-Վլատիմիր Մալեւնիքով Ռուսիա 184.2 կէտ

Յայաստանէն Գրաչիկ Պապայեան առաջին

հանգրուանին շահեցաւ 621.5 կէտ

եւ գրաւեց 24-րդ դիրքը: - Տղոց թրէյի

աւարտական 1-Եստիֆ Կլազնովիչ

Խրուաթ. 13 կէտ +4, 2-Ճիովաննի Փիլիբո

13 կէտ +3 3-Ետուըրտ Լինկ Բրիտանիա

13 կէտ

### ԼՈՂԱՐՇԱԲ- ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

- Կիներու 100 մետր թիթենիկ

Ողիմպիական եւ Աշխարհի մրցանիշ

1-Սիոսթրոմ Շուէտ 55.48, 2-Ուլեքսիք

Զան. 56.46, 3-Վոլմըր ԱՄՆ 56.63

- Կիներու 400 մետր ազատ

լող Ողիմպիական եւ Աշխարհի մրց.

1-Լետըքի ԱՄՆ 3:56.46, 2-Զարլին

Բրիտանիա 4:01.23 3-Սմիթ ԱՄՆ

4:01.92 - Կիներու 100 մետր

կռնակ լող 1-Ռոսու Չին. 1:44.65,

2-Լեո Զլու Գար.Ափր. 1:45.20,

3-Տուայըր ԱՄՆ 1:45.23

-Տղոց 100 կռնակ լող Ողիմպիական

մրցանիշ 1-Մըրֆի ԱՄՆ 51.97, 2-Ռու Չին.

52.31, 3-Փլամըր ԱՄՆ 52.40

- Տղոց 4x100 մետր 1-ԱՄՆ

3:09.92, 2-Ֆրանսա 3:10.53,

3-Աստրալիա 3:11.37



## ՈՒՆՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս հանդիսանոր շուրջով պիտի նշուի Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ կատարուի Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի ուխտագնացութիւնը:

Այս առիթով, ուխտաւոր հաւատացեալներուն կը ներկայացնենք Ուխտի Օրուան ժամանակացոյցը.-

### Ուրբաթ 12 Օգոստոս

- Աղի օրհնութիւն առաւօտեան ժամը 11:00-ին
- Աջահամբոյր, առաւօտեան ժամը 11:30-12:00
- Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5:00-ին
- Հսկում, երեկոյեան ժամը 7:30-ին
- Ոչխարներու զենում, երեկոյեան ժամը 8:30-ին

### Շաբաթ 13 Օգոստոս

- Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 7:00-ին
- Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5:00-ին
- Հանդիսաւոր Ս. եւ Ամմահ Պատարագ, երեկոյեան ժամը 8:00-ին

Պիտի պատարագ՝

### ԳԵՐՇ. Տ. ԵՓՐԵՍ ԱՐՔ. ԹԱՊԱԳԵԱՆ

Արարողութեանց պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր Հայրապետական պատգամը փոխանցէ՝

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԱԹՈՂԻԿՈՍ

Յընթացս Ս. եւ Ամմահ Պատարագին, տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատաղի օրհնութիւն:

### Կիրակի 14 Օգոստոս

- Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Ս. եւ Ամմահ Պատարագ առաւօտեան ժամը 10:00-ին:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

### ԳԵՐՇ. Տ. ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՂԵԱՆ

Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի Թեմին Յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի տեղի պիտի ունենայ խաղողօրհնէքի արարողութիւն:

Պիքֆայայի Վանքի Ս. Աստուածածին մատրան մէջ Ս. եւ Ամմահ Պատարագ առաւօտեան ժամը 10:00-ին:

### Երկուշաբթի 15 Օգոստոս

- Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ տեղի պիտի ունենայ Ս. եւ Ամմահ Պատարագ եւ հոգեհանգիստ ազգիս համօրէն ննջեցեցոց հոգիներուն ի հանգիստ:

## Կ Ա Ր Ե Ւ Ո Ր

Անոնք որոնք կը փափաքին մատաղցու ոգիսար կամ խաղող նուիրել Ուխտի Օրուան առիթով, պէտք է ամենէն ուշը Ուրբաթ, 12 Օգոստոս 2016-ի կէսօրին, իրենց նուիրելը յանձնեն Անթիլիասի Մայրավանքը կամ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքը:

Հեռ: Անթիլիաս 04-410001/3, 523461/2 - Պիքֆայա 04-983634/5:

## Մշակութային Յուշատետր

Ձեռնարկի անուն	Վայր	Թուական	Ժամ
<b>Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՑՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝ ԱՐՈՁՔԻ ԸՄԲԱԾ</b>	Պիքֆայայի Ս. Աստուածածին Մատրան մէջ	8-12 Օգոստոս 2016	Ամեն առաւօտ ժամը 10:00
<b>ՂԱՍՏԻԱՐԱՎՅԱԿԱՆ - ԳՈԳԵՒՈՐ ՇՐՋԱՊՏՈՅՑ</b> Կազմակերպութեամբ՝ <b>Ս. Յակոբ ե</b>			